

տեղեկի անհոգութեամբը, երբ ռեժիմէն շղթայակապ, բայց անկէ հալածուած, աղօթելու սահմանուած, բայց պետական պաշտօնեայի հոգեբանութեամբ: Ո՛չ գրող, ոչ ալ սորվեցնող: Ո՛չ ժողովուրդի մարդ, ոչ ալ Աստուծոյ: Մաթիկ գորչ բառեր ունէր էջմիածինին, իր գահակալին, զոր կը ներկայացնէր մեծ յեղափոխական, բայց յորովայնէ ընտրեալ տնանկ մը իմաստէ: Ու կը դատապարտէր միաբանութիւնը, որուն զարգացած միութիւնները կ'արատաւորէին եկեղեցին ու հին տիպարները ու զայն կը պահէին ծիծաղելի: Ու տակաւին այնքան բան, ինծի համար բոլորովին նոր, հակապատկեր իմ գիտցածներուս: Այս բոլորը, անփոփոխ կանգունովը իր սորվածներուն, կարծրացման մէջը իր համոզումներուն: Այսպէս կը ներկայացնէր նաեւ Տաճկահայաստանը: Թիֆլիսէն Ատանա մէկ էր նայուածքը: Ու կը հաւատար, թէ իր ժողովուրդը ճանչնալու կատաղի տարփանքը ուրիշ բան չէր, եթէ ոչ պատշաճեցումը իր գիտցածներուն, բոլորն ալ փորձելի, փորձարկելի մեր հայրենիքին մէջ, գիրքերէն վեր ու դուրս, ուսանողի իր խակ եռանդը բանակաւնացնելու: Անփոփոխ՝ իր մտայնութեանէն ալ, քանի որ իր տեսածներէն առաջ իր ուզածները կը մտնէին գորչապարի մը, իր ուղեղին տակ: Ու ամէն դէմք, ամէն քաղաք, ամէն իրականութիւն իր մէջ կը վերածուէին գիշերաշրջիկի զգայնութեանց: Պէտք էր լսէր իր բերանէն այլակերպումին սա քերթուածները: Վեհափառը (Խրիմեան) շրջանակող բազմիմաստ եպիսկոպոսները, այդ աղջին ընդմէջէն կ'ըլլային միջին դարու պորտաբոյծներ: Ու գրողները՝ նոյն լոյսէն գունաւոր, «անսկզբունք», «վաճառեալ», «փուճ» արարածներ: Կ'ատէր Շիրվանզադէն, որուն փառքը կը ճօճուէր Ահարոնեանի նորասկիզբ համբաւին ընդմէջ: Ու երկար է պատմել արեւելահայ գրողներէն իր վճիռները, որոնք գիտութեան ուսանողի մը բերանէն զիս կ'ընէին շուար, ո՛չ թէ իրենց այլանդակութեամբը, այլ այն մասնաւոր վստահութեան համար, որով